

մինչեւ յայսօր ժամանակիւն՝ (Ե՛տալութիւն էջ 67-ը տող 7: Յետոյ «Երգ առ Սր. գետն Յորդանան Ասացեալ նորին»: Հինգ տուն, որմէ վերջ ա. Աղօթք ի Սր. գետն Յորդանան»: Կը հասնի էջ 68ի տակ: Էջ 69ա. —)

անտան վանաց սրբոյն հօրեւ Սաբայի»

և ի գետ Յորդանանու ընթացեալ Գժամու ճանապարհ դէպի ի հարաւ պատահի վանքն հօրն Սաբայի, մեծի ճգնաւորին, որ շինեալ ի ստորոտ լերին միոյ, մեծաւ շնչ և բայնապիր, և ունի եկեղեցի մի մեծ, զմբէթաւոր և ընդորձակ, յանուն Սրբոյ հօրն Սաբայի: Աւնի ևս ը (8) փոքրիկ եկեղեցիք: Առաջինն յանուն Սրբոյ Սաբայի, երկրորդն Քառասուն մանկանց, երրորդն Սրբոյ Կաբապետին, չորրորդն Սրբոյն Գէրզայ, հինգերորդն Յոհաննու Առկերեանին, վեցերորդն Յոհաննու Գամակացոյն, հօթներորդն Սրբոյ Նիկողոյոսին, ո.թերորդն Սրբոց Առաքելոց: Այլ և ունի բազում խցերս, և աղբիւր մի բարեհամ, որ աղօթիւք Սրբոյն Սաբայի ի վիմէ կոթի, բայց ճանապարհն է յոյժ դժուարընթաց, և է ի ձեռս Յունաց աղքին»:

«Այսոքիկ են որք գտանին ու խոտանեղիք յարեկեան կողմն Սրբոյ քաղաքիս երուսաղէմայ, զոր Աստուծով պատմիցաք ըստ կարի մերում համաստաբար»:

«Այժմ տեսուք յարեմտեան կողմն, թէ զինչ դտանին, և կամ որպիսի տեղիք:»

(Շարունակիլի)

Յ. ԳԻՒՐՏԵԱՆ



## ԽՈՐՃՈՒԹՔ ԵՒ ԽԾՄՔ

Զեր քշամիները յախառոր կերպով անցեց, վասն զի կարելի և որ հաշտուի իրարութիւններ:

\*

Զար մարդիկ միջէ խոյս կու տամ մշտամութեան բարի մարդոց՝ որոնց առաջինուրիւնը կը իւրչեցնէ զիրենի:

\*

Ազահը ՏՔ չէ իր ինչերում, այլ իր ինչերը կը տիրեն իրեն:

\*

Առաջինուրիւնը սրի բամականուրիւնն է:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԻՒԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ

ՆԱՐԱԴԻՒՏ ԱՐՉԱՆԱԿՐՈՒԹԻՒՆ ԵԵ ԵՐԱԲ

ԱՍՈՐԱԿՐՈՒԹԻՒ, ՊԱՏՄՈՒԹԵ, ԲԱՋՄԵՐ-ԶԱԿՆԻԿ ՄԲ. ԵՒ ՓԱՌՈՒՈՐԵԱ, ՀՐԹԻՆ. ԱՏԵ-ՓԱՆՈՍԻ ՍԻՒՆԵԱՅ ԵՊՈՒ. ՅԱԿԻՒՆԵԱՅ. Ի. ՏԻԵ-ՄԻԹԱՐ ՎՐԴՎՈՏԵ. ՅԵՊՈՒ. ՄԲ. ԱԽԱ-ՏԻՆ ԱՅՐԱՎԱՐԱՅ:

ՄԵծու զթութրն. այ. և անրու մար-դասիրութրն. ձեռնամուխ եղաք ի պատ-մութի. սրբազն հրպին. սրբոյն Մտեփու-նոսի Սիւնեաց վերադիտողի, և ընծայե-ցաք որ. և երկնահանգւոյն ուխտին Բու-նասեաց վանաց սրբաժաղավ եղբայրուն. Յորոց յամեննեցուց հայցեմ թողութի. յանցանաց իմոց յանդգնութե., որով և ձեզ տուեալ չնոր և ողորմութի. ի տոնէ., որ առան է ի տուրս պարզեաց:

Յամի թլւականութեն. Հայոց հարիւ-երորդի ութուներորդի ի կթզկոսութեան. Դաւթի Սրեմաւնեցոյ, որ կալու զաթոռ հրպութեն. յետ Յոհաննու Աւանեցոյ Յո-րում ժամանակի կայսրն Յունաց կեռն, և պատրիարդն Փարաբիանոս մեծու պաղու-ատնօք ի ձեռն փրկչական խաչին քի. ըգ-զաւրսն Տաճկաց, որ էին զաւրտուոք, զա-մենսեան ծովաբեկ արար, Ամիրմամին, պատմենու զփառու այ. և զզաւրութի. նր. և եւ յետ նց. բռնակութեաց Շալահեշմայ, որ նորպեաց զգաբրանդն Աղեքսանդրի, զա-ւերեալն ի Սլեմանա, յորոյ աւուրս եկն Հերթ ի Հայու և արար աշխարհազիր: Եւ եղեւ սով սաստիկ յաշխարհիս Հայոց եւ մարդոյ մահ, և անաւրէնն Բարսն պարսիկ կոտորեաց ի Գեղարքունոյ, ԺԵ. Ռ. այր, և այբեաց զար. ուխտն(1), Մաքենոցաց, որ էր աթոռ եպսացն. Սիւնեաց: Աչ զոյր իշխան Հայոց յաւուրսն յայնոսիկ, զի այ-րեալ էին զզիխաւոր իշխանքոն(?) հայոց, Պ.ի նախջաւան քաղաքի, և Ն.ի ի երամ գեղի:

(1) 2. ոլին,

Յայշնմ ժամանակի յայտնեցաւ սրն. Ստեփաննոս ի. Դըլին քաղաքի, որ թարգմանի Բլուր<sup>(1)</sup>, ըստ պարտիկ լիզուին, որը չինեաց Խոսրով արքայ Հայոց, որդի մեծին Տրդատայ: Իսկ սրն. Ստեփաննոս որդի զուով աւագերիցու քաղաքին, տուալի սր. ուխտն Մաքենոց, յաշակնառութիւն, մեծ հաւըն Սոզովմոնի՝ որ կարողիալ էր զտաւնակոնն, և յետոյ աշակերտեցաւ ան. Մովսեսի Միւսնեցյ ի. ձ՛՛. թոյլին:

Էր եւ ընկեր սորա ի նմին քաղաքէ քհայ. ոմն Գրիգոր անուն, ի սր. ուխտէն Այրիգանաց, որ է հիմնարկեալ ՚ի սրբոյն Գրիգորէ, ի զլուխ ձորոյն գեղաքաղաքին Գառնոյ: Երկոքին սոքա ընտիրք և դարձալիք, յառաջազելք ի զիտութիւն, զրոց եւ յարուեստս երածշտականուեւ: Սոքա միաբանեալ զնացին իմաստուիրաց յԱնթէնս եւ ուսան զամ. սահմանն փիլիսոփայութեւ. իմաստնոց արտաքնոց, և քաջատեղեալք եղեն ածաշունչ, ընապրենաց և մեկնչաց: Անտի եկեղեւ, եկին ի թշրուրնակ. քաղաքն Կոստանդնուպալիս, զոր չինեաց Աղեքսանդր Մակեդոնացի, և յատ. Հ. ամաց մեծացոյց կայսրն Կոստանդիունոս: Անդ զտին նոքա զգիրսն Դիտնասիոսի Արիսպագացոյ, զոր գրեաց ի թելազրութէնէ Պատրիարք աստքելոյ եւ Յեսեմինոսի տարրական ածաբանութեցն: Իսկ նք. մեծաւ ցանկութք. թարգմանեցին զ՞ա ի յունականէն ի հայ բարբառ, և զի դժուարիմաց էր բան զրոցն, սրն. Ստեփաննոս ըստ տուեցելոյ նմա իմաստութիւն. ՚ի վերուստ, եզ ի վր. նք. լուծմունս մեկնաւզորէն, որ երեխ մինչև ցայսաւր: Գտին ի ի նմին քաղաքի զրագմիմաստ զիրսն Գրիգորի Նիւռացոյ, որ վս. բնութեւ. մարզոյ եւ կազմութիւ, կարգեալ էր, և զայն ևս թարգմանեցին: Եւ զի յերկար ժամանակոս կացցին ի թզրիալ. քաղաքին, ձանաւթացան բազմաց և զլիսովին իսկ Գրեմանոսի պատրիարքին: Իսկ յաւուր տօնի ծընընդեան և յայտնութեւ. տն. ի մեծ եկեղեցւոյն ի սրբն. Սոփիա, որ թարգմանի իմաստութիւն, որ չինեցաւ նախ ի մեծէն նոստանդիանոսէ և յետոյ մեծափառ նորոգեցաւ Յուստիանոսէ կայսերէ, յակիցըն թուականին Հայոց: Տեսեալ զնս. յեկեղեցւոյն հարկեցին

հազորգել աւրինաց խրեանց. իսկ նք. ոչ առին յանձն՝ տսելով, եթէ առանց հրամանի պատրիարքին մերոյ չիշխամք հազորգել ընդ ձեզ: Զայս լուեալ թոյլ ետուն նոցա:

Ապա զրիցին թուխտ ի հայս, որոյ ըսկիզբն այս է. Թո. է խաղաղութիւն. մեր, որ ունէր յինքեան սասրուգրեալ բանս դժուարիմաց եւ մանուածոյս ըստ քերթողական սճոյն ի վր. երկուց բնութեցն. և առանձնակի ներգործութեցն, և կնքեալ կապարաւ. ի ձեռն նց. առաքեցին ՚ի Հայս, կարծելով ըմբերանեալ զնս: եւ ի հաւան ածեալ դուանութեւ. խրեանց:

Իսկ նք. եկեղեւ յաշխարհս մեր, տեսին զայ նեղեալ և պաշտրեալ յամ. կողմանց, ի Խոպրաց, և ի Տաճկաց, և ի Յունաց. և զի սր. եւ մեծ իմաստասէրն Յօհան Աւեծնցին թողեալ էր զաթոս կաթողիկոսութենն. և ստացեալ վարս կրաւնաւորականըս, և տր. Դաւիթ զեռ ոչ ևս էր նստեալ յաթոս, տեսեալ սրբոյն Ստեփաննոսի, և թէ ոչ ումեք փոյթ է վս. թղթոյն, զոր ինքն երեր ի Հոռոմոց, երթեալ ի Դըլին, առանձնաւ, զրէ պատասխանիս, զի՞սի. խաղաղութիւնն, յուգնապահոյճ հանձարով և գիտութք, բան առ բան լուծանելով, ցյառապիկույտ բան նց. և առաքեաց, զոր լուեալ զագոնացան սրտիք. և եղծաւ ամ. իմաստութիւն նոցայ:

Իսկ սուրբն ժամ զտեալ պարապոյ, արար բնախաւութիւ. բազում և մեկնութիւ. գժուարիմաց բանից տւետարանչացն. նաև Յորայ զրոցն և եղեկիէլի մարզարեւթիւն. եւ վս. աստքելազիր պահոցն, և հայրապետատանման, կարգեաց շարականս և կցուրզս բազումս:

Իսկ ընկեր սորա Գրիգոր քհայ., մակոնուն կոչեցեալ Պաղիկ, զնացեալ ի տեղիսն իւր յԱյրիկանս: Եւ զի յառաջազելմ յերածշտականութեւ, եղանակեաց զ. ձ՛՛. ողմն. Դաւիթի, սառոյդ ուզի (?! յինանցն, եւ զաղուհացից սղմսն., եւ զերզս ճրագալուցին. զաւհեցուքն. եւ զայլոն ամ. եւ անթիւ կցուրզս քազըր եղանակս, զոր կարմս հիղինէ' (?! եւ Իոմանս, յունականք սերմանեալ էին ի Հայք: Իսկ սա անեցոյց եւ սահմանեաց երգել յամ. տօնս տերունականս և յիշատակս վկոյականս: Բայց յաղակս քաղցրավանկ եղաւ

(1) 2b.n. Բլու

նակի նր. անկեցաւ ի նա ախտ անբարստաւանութեն. :

Յաւուր տաւնի սրբուհւոյ ածածնին. եկն սրն. Ստեփաննոս յԱլբիգանս առ Գրիգոր ընկեր իւր համաշահրի, տաւնելի միասին զտաւն տիրամաւրն: Տեսաներ ի հոկման զիշերին աչտւք բացաւք զտատանայ, զի հոծեալ էր յուսն Գրիգորի և մահ միզէր. յորժամ սկսաներ նա ի պաշտաւն կամ ի կարգացումն: Խոկ ի վազիւն կոչեալ առ ինքն զիրիգոր փիլիսոփայն, խրատեաց եւ յանզիմանեաց զնա սիրով, յայտնելով զիրս տեսլեանն. եւ նա ի սպայութի. եկեալ, եթող ի բաց ամեննեին զպաշտաւնն, եւ միայնացաւ արտաքոյ վանացն ի քարայրի միում փոքու զամ. ժամանակս կենաց իւրոց. վարս խստամբերս յանձն տուեալ, առաւել քան զտաւեալն: Մինչ զի չնորհք բժշկութե. լիներն ի ձեռո նր. եւ յայնմ տեղուջ հանգեաւ ի քս. երանելին Գրիգոր. եւ ի նմին յայրի կան պտաւական նշխարհք նր., յորմէ բաշխին չընորհք բժշկութե. ի գիրեզմանէն ամ. ախտաժետաց, եւս առաւել ամլոց եւ անորդեաց չնորհէ ած. որդէծնութի., բարեխաւութը. նր. :

Խոկ յետ բզմ. ժամանակաց շինեցաւ այդ բնակութե. նր. խորան փառացն այ. եւ սեղան պատարազի զտոինն անմահի: եւ մերձ առ նմին հիմնեցաւ կթզկէ. եկեղեցի երկնանանդէտ և բարձրափառ, և առ դրան նր. տուն ժամու աղաւեթից ի կոփածոյ քարտնց և մահարձանաց<sup>(1)</sup> յաւրինեալ և կրով ձուլեալ: Խոկ ի ներքոյ այրին յաւրինեցան բ. եկեղեցիք, ի միաձոյլ միազադ քարտնց փորեալ, եւ յարուեստ գաղատոսաց նկարեալ, զարմանալի երեւեալ տեսողացն: Եւ ի մէջ եկեղեցեացն տուն տապանի ի նոյն վիմէ կամարակապ դրոշմեալ, առ ի հանգիստ քստաէր. իշխանացն՝ իշխանին Պոտէշայ, որ է յազգէ Հաղպակայ, կարգեալ հաղպատագետ հայոց:

Դարձցուք անդրէն ի կարգ պատմութենս. որ առաջի կոյ: Կայր քոյր մի սրբայն Ստեփաննոսի Սահակուխտս անուն ստացեալ վարս կուսականս և հրամարեալ յամ. սրաւսանաց աշխարհիս. եկեալ ի քաղաքէն Գիշայ՝ բնակեցաւ ի խորային ձու-

րին Գառնոյ առ Ազտառ գետով, որ ելանէ ի լերանցն Փեղամայ. եւ հոսեալ առ վարաժնունաւք մտանէ յերասիս: Անդ(<sup>2</sup>) հաճեալ սր. կոյսն՝ բնակեցաւ ՚ի կայարանի սրբոյն Սահակայ հրապին., և ի նմին վախանականացաւ: Սա էր զարդարեալ ամ. ուսաքինութիր, և իմաստութիք. մնուցանէր մանակուսածութիր, և ամաստութիք. իմ ինքն ի ներքոյ վարագուրի նստելով, ուսուցանէր զաշակերտեալսն: Սա արար տազս բազումս եւ մեղեղիս եւ կցուրդս ծնընդեան և փոխանան, յորոց մի է Սրբուհի Մարիամին:

Խոկ սրն. Ստեփաննոս կայր ի կթդկուսարանին ի Գլւին, զի քաղաքն այն էր աթոռ հրապացն. հայոց զոր ի. Պե. թըլին հայոց առին Տաճիկի և աւերեցին և ժը. ո. այր սպանին յաւուր յայտնութեն., ի վկայարանի սրբոյն Սարգսի և արեամբ կոտորելոցն ծածկեցաւ և ծովացաւ սր. սեղանն եւ աւազանն եւ աւելի քան զ. լի. ո. գիրեցին: Խոկ ի ճկդ. թուին հրամանաւ Վլթայ ամիր մումնոյ Արգլազիդ ամիրայն վիրատին շինեց զիրւին, լայն և ընդարձակ, որ կայ մինչեւ ցայսաւը պարիսպք նր. և յաւրինուածք. թէպէտ թըլւրն. վրաց Գաւրզի, հայր Թամարին, Ա. Ժ. Ա. թուին էառ զքաղաքն զայն եքալեաց զմզկիթն և զմասն ինչ պարըսպին, վրէժնողիր եղեալ սպանման աղատացն իւրոց, ի ձեռաց Խորթէ ամիրային, որ հնար ի Գառնի զիւանէ, որդի Ապուլեթայ, և ըզդլուխս աղատացն տարեալ ի Դուին, թանով եփեալ զքաղաթունոն, զնէ ի շարս միթրային: Եթայ եկեալ Գաւրզի և տուեալ զքաղաքն, խայտառակեաց զտաճիկօն ի հուր եւ ի սուր, անողորմն ստատկելով: Խոկ զթանեփեց գաղաթունոն եղեալ ի կուպայի, ծածկեց սոկէփայլ կտաւաւք, եղ ի յուս մուղրեացն և բոկոսն և զիսիրաց ետ տանել ի Տըփիսիս եւ անդ(<sup>2</sup>) թաղեաց պատուով. և զմուղրիսն կացնազոհ արար ի վր. գիրեզմանի աղատացն:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊ. ՅԱՎԱՐԵՓԵԱՆՑ  
(Շարունակելի)

(1) Զ. անդ, (2) Զում. անդ,

(1) Զ. մահարձան.